ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Խ-262-28.08.2019,13.01.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենսգրքի 970-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Համալիր թույլտվության պայմանագրի ձևը և դրանից բխող իրավունքի գրանցումը»,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Այն դեպքերում, երբ համալիր թույլտվության պայմանագիրը կնքվում (կնքվել) է մտավոր սեփականության այնպիսի պահպանվող օբյեկտի օգտագործման վերաբերյալ, որի համար իրավատիրոջն օրենսդրությամբ սահմանված կարգով տրվում է համապատասխան արտոնագիր կամ վկայագիր՝ համալիր թույլտվության պայմանագրով տրամադրվող իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքի դադարումը ենթակա են գրանցման գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների ու ապրանքային նշանների գրանցում իրականացնող լիազորված պետական մարմնում:

Համալիր թույլտվության պայմանագրով նախատեսված՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքի դադարման պետական գրանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Համալիր թույլտվության պայմանագրի կողմերը երրորդ անձանց հետ հարաբերություններում իրավունք ունեն պայմանագիրը վկայակոչել միայն դրանից ծագող իրավունքը սույն մասով նախատեսված կարգով գրանցելուց հետո:

Գրանցման պահանջը չպահպանելու դեպքում համալիր թույլտվության պայմանագիրը համարվում է առ ոչինչ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 973-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) ապահովել համալիր թույլտվության պայմանագրով տրամադրվող իրավունքի պետական գրանցումը (970-րդ հոդվածի 3-րդ մաս).»:

Հոդված 3. Օրենսգրքի 978-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «970 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով» բառերը փոխարինել «970-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով:

Համարակալել նույն հոդվածի մասերը:

Հոդված 4. Օրենսգրքի 979-րդ հոդվածի 2-րդ մասում «970 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով» բառերը փոխարինել «970-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է համալիր թույլտվության պայմանագրով նախատեսված՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքի դադարման պետական գրանցման կարգը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Խ-262-28.08.2019,13.01.2020-ՊԻ-011/1
երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 305-րդ հոդվածում «գործարքն անվավեր է» բառերը փոխարինել «գործարքը վիճահարույց է» բառերով:~~

~~*Հոդված 2.*~~ Օրենսգրքի 970-րդ հոդվածի՝
1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.
«Համալիր թույլտվության պայմանագրի ձևը և դրանից բխող իրավունքի գրանցումը»,
2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,
3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.
«3. Այն դեպքերում, երբ համալիր թույլտվության պայմանագիրը կնքվում (կնքվել) է *մտավոր սեփականության* այնպիսի պահպանվող օբյեկտի օգտագործման վերաբերյալ, որի համար իրավատիրոջն օրենսդրությամբ սահմանված կարգով տրվում է համապատասխան արտոնագիր կամ վկայագիր՝ համալիր թույլտվության պայմանագրով տրամադրվող իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքի դադարումը ենթակա են գրանցման *գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների ու ապրանքային նշանների* գրանցում իրականացնող լիազորված պետական մարմնում:
Համալիր թույլտվության պայմանագրով նախատեսված՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքի դադարման պետական գրանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
~~Համալիր թույլտվության պայմանագրով նախատեսված՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավունքի տրամադրումը, ինչպես նաև այդ իրավունքի դադարումը ենթակա են գրանցման լիազորված պետական մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

Համալիր թույլտվության պայմանագրի կողմերը երրորդ անձանց հետ հարաբերություններում իրավունք ունեն պայմանագիրը վկայակոչել միայն դրանից ծագող իրավունքը սույն մասով նախատեսված կարգով գրանցելուց հետո:

Գրանցման պահանջը չպահպանելու դեպքում համալիր թույլտվության պայմանագիրը համարվում է առ ոչինչ:»:

Հոդված ~~3~~2. Օրենսգրքի 973-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) ապահովել համալիր թույլտվության պայմանագրով տրամադրվող~~պայմանագրից ծագող~~ իրավունքի ~~տրամադրման~~ պետական գրանցումը (970-րդ հոդվածի 3-րդ մաս).»:

Հոդված ~~4~~3. Օրենսգրքի 978-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «970 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով» բառերը փոխարինել «970-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով:

Համարակալել նույն հոդվածի մասերը:

Հոդված ~~5~~4. Օրենսգրքի 979-րդ հոդվածի 2-րդ մասում «970 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով» բառերը փոխարինել «970-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով:

Հոդված ~~6~~5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է համալիր թույլտվության պայմանագրով նախատեսված՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքի դադարման~~համալիր թույլտվության պայմանագրով նախատեսված՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավունքի տրամադրման, ինչպես նաև համալիր թույլտվության պայմանագրի լուծման~~ պետական գրանցման կարգը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

No	*Առաջարկի հեղինակը*	*Վերաբերելի հոդվածը, կետը*	*Առաջարկը*	*Հեղինակի (հիմնական զեկուցողի) դիրքորոշումը*	*Հանձնաժողովի որոշումը*
1.	Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 1-ին հոդված	հանել նախագծից	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետ	խմբագրել	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 2-րդ, 3-րդ, 6-րդ հոդվածներ	«իրավունքի տրամադրում» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «իրավունք» բառով և համապատասխան հոլովաձևերով	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Պատգամավոր Սուրեն Գրիգորյան	Նախագծի 3-րդ հոդված	«պայմանագրից ծագող» բառերը փոխարինել «պայմանագրով տրամադրվող» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Հեղինակ	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերու-թյուն	խմբագրել	Ընդունվել է	Ընդունվել է